

լուծանել զպսակ նոցա՝ թոյլ տալով կնոջն Շուշանկան Յարութիւնեան Վարդեանեան մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 73.

— Ի 6-ն փետր. Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնստնտնուպոլսի Հայոց Վրաստանի, լուծանել զպսակ ընակչի Ախալցխայ քաղաքի Ստեփանոսի Վեղիբեանց ընդ կնոջն Շողակաթի, քանզի չիք այլևս հնարաւորութիւն ածելոյ զգամուսինս ի հաշտութիւն, և թոյլ տալ երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն: Հ. 115.

Ի 11-ն փետր. Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնստնտնուպոլսի Աստրախանի լուծանել զպսակ Աւետիս Գործակատարեանց Ալէքսանդրօպոլցոյ ընդ կնոջն Լուսնթափի, թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 125.

Մ. ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ

Մեր նախնիք Մ. Էջմիածինը «լուսոյ խորան» են անուանել: Լուսաւորչի անուան հետ կապուած տեսեան մէջ ևս ներկայանում է այն երկնային տարրերից կերտուած մի շէնք: Այդ բոլորը այլաբանական և բանաստեղծական արտայայտութիւն են մեր նախնեաց Էջմիածնի և հայրապետական աթոռի մասին ունեցած հասկացողութեան: Մենք յաճախ առիթ ենք ունեցել մեր աչքերը դէպի անցեալը դարձնել Հայոց եկեղեցու, հայրապետական աթոռի նշանակութիւնը բացատրելիս: Այդ մեր իրաւունքն էր և արդարութեան պահանջ. Գնահատութեան միակ չափը պատմութիւնն է, անցեալը, լինի այդ անհատի, հաստատութեան, թէ ամբողջ ազգի համար:

Սակայն այդ դրամի մի երեսն է միայն: Անցեալի և ապագայի միջին օղակը ներկան է: Առանց այդ միջին օղակի ոչ անցեալի գիտակցութիւն և ոչ ապագայի ծրագիր կայ: Այնպիսի մի ժամանակ, երբ ժողովրդի մէջ հա-

կառավարող ձայները են լսուում, Էջմիածնի նշանակութեան մասին, մեզ վերայ առանձին պարտք կայ ջանքեր գործադրել Մ. Աթոռի նախկին հեղինակութիւնը վերականգնելու: Մ. Աթոռը «լուսոյ խորան» պիտի ճանաչուի ընդհանուր հայութեան կողմից և այժմ: Այդ ճանաչողութիւնը իրական և ընդունելի դարձնելու հաստատութիւններից մէկը մեր տպարանն է:

Շատ յաճախ է լսուում, թէ տպարանը առևտրական հաստատութիւն է. նոյն իսկ խօսք է լինում կապալով տալու, որովհետև սպասուածի չափ նիւթական օգուտներ չի ոտացուում: Մենք բողոքում ենք այդպիսի սխալ և մոլոր հասկացողութեան դէմ, որ յատուկ է այն մարկանց, որոնք նիւթական շահից դուրս ուրիշ հասկացողութիւն չունին: Մեր տպարանը նիւթական փնաս չպէտք է ունենայ անշուշտ, և եթէ կարգաւորութիւնն ու կանոնաւոր հսկողութիւնը հետևողական լինի և երկարատև, համոզուած ենք, որ նիւթական կողմից ևս շատ օգտակար կլինի: Բայց Մ. Աթոռի տպարանի կոչումը մի քանի կուպէկ չահելը չէ, այլ աւելի բարձր բան: Տպարանը այն հաստատութիւններից մէկն է, որ պիտի նպաստէ հայրապետական աթոռի լուսոյ պսակն ու բարոյական հեղինակութիւնն աւելի և պայծառացնելու ընդարձակելու, նա առևտրական հաստատութիւն չէ նման մասնաւոր մարդկանց ձեռնարկութեան, այլ լուսաւորութեան և գիտութեան տարածման մի փարոս: Պատմական տխուր պայմանների հետևանքով դադարել է նուիրակութեան հաստատութիւնը, որ հօտի և աթոռի սերտ յարաբերութեան գլխաւոր միջոցն էր, դուրս պակասն այժմ տպագրական խօսքը պիտի լրացնէ. հայութեան ամենախուլ անկիւններում իսկ պիտի հնչէ հայրապետական աթոռի փրկարար և մխիթարող ձայնը ի դէմս իւր միաբանութեան գլխական գիտական գործունէութեան: Աւետարանական քարոզչութեան, առաքելութեան և դաստիարակչութեան մի գործոն պիտի նկատուի տպարանը մեր միաբանութեան աչքում:

և ոչ առևտրական հաստատութիւն։ Գուցէ երբեմն ստիպուած կլինի մեր տպարանը նիւթական զոհողութիւններ անել ձրի կամ էժանագին գրքոյկներ տարածելով, մեծածախս գիտնական և գեղարուեստական աշխատութիւններ հրատարակելով, բայց դորանով կընդարձակուի նորա բարոյական դրամագլուխը, որ Մ. Աթուռի համար շատ թանկ պիտի գնահատուի։ Բարոյական այն հեղինակութիւնը, սէրը, որ մենք ձեռք կըբերենք այդպիսի զոհողութեամբ արդիւնաւոր կլինի նոյն իսկ նիւթական տեսակէտով ուրիշ կողմերից և ուրիշ պայմանների մէջ։ Պէտք է ցանկենք, որ հնձենք. պէտք է ծախսենք, սրպէս զի աւելի մեծ արդիւնք ստանանք բարոյապէս և նիւթապէս։

Այս նկատողութիւններն անելու ստիպուեցտեք վերջին տասնեակ տարիների ընթացքում յեղեղուած և գործադրուած թիւր գաղափարների պատճառով։ Մինչդեռ նախկին ժամանակներում, երբ մեր միաբանութեան մէջ շատ աւելի քիչ էին թուով պատրաստ մադիկ, փորձեր են եղած հայ պատմագիրների կամ եկեղեցական հայրերի շարք հրատարակել, տպարանի հաշուով են տպագրուել միաբանների աշխատութիւնները, իսկ մի երկու տարի առաջ միաբաններից ոմանց կողմից արուած այդպիսի մի առաջարկութիւն կատարեալ անուշադրութեան մատնուեցաւ։ Այժմ արդէն սովորական է դարձած միաբանների աշխատութիւնները հեղինակների հաշուով տպել, բայց աղքատ և ուսումնասէր միաբանը ռիտեղից պիտի կարողանայ հոգալ այդպիսի գումար առանց մուրացկանութեան դիմելու։

Տարիներից ի վեր մեր միաբանակից Տ. Կարապետ վարդապետ երկու կարեւոր գիւտ էր արել։ Գոցանից մէկը Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւնն» էր, որի բնագիրը կորած է։ Հայ և օտար եկեղեցու հայրերը վկայութիւններ են բերում այդ աշխատութիւնից, բայց դործի ամբողջութիւնն անյայտ էր։ Երկրորդ գիւտը Իրենիոսի երկերի թարգմանութիւնն էր մինչև այժմ դարձեալ ան-

յայտ մեր մատենագրութեան մէջ և միայն եկեղեցական հայրերի բերած վկայութիւններից յայտնի: Իրենիօսի երկերից յատկապէս մէկը՝ «Յոյցք առաքելական քարոզութեանն» համաշխարհային նշանակութիւն ունի և շատ պատուաքեր մեր մատենագրութեան համար, որովհետև ոչ միայն բնագիրն է կորած, այլ և ոչ մի տեղեկութիւն չկայ նորա մասին օտար գրականութեան մէջ: Բայց այսպիսի գիտերն իսկ Մ. Աթոռի հաշուով չտպագրուեցան, որ նորա պատուին և անուան միայն վայել էր. այլ կարապետ վարդապետ և իւր աշխատակից Երուանդ վարդապետն ստիպուած էին բարերարների կամ եւրոպական հրատարակիչների գիմել: Լայպցիգի Հինրիխի նշանաւոր գրավաճառանոցը սիրով յանձն առաւ ոչ միայն տպագրել «Յոյցք առաքելական»-ը, այլ և 1000 մարկ վարձատրութիւն տալ առաջին հրատարակութեան համար: Մի տարի անցնելուց յետոյ, արդէն երկրորդ տպագրութիւնն է պատրաստուում:

Մեր մի ուրիշ միաբանակիցը Տ. Մեսրոպ վարդապետ պատրաստել է Մ. Աթոռի ձեռագիրների գիտնական ցուցակը և պէտք է դուրսը բարերարներ որոնէ այդ գործի տպագրութեան համար: Տ. Սահակ վարդապետ Ամատունի երկար տարիների տնդուլ աշխատանքով պատրաստել է հայ բարբառների մի ընդարձակ բառարան և պէտք է Բագուի կուլտուրական միութեան օգնութեան գիմէ իւր աշխատութիւնը տպագրելու համար: Մենք չենք յիշում ուրիշ միաբանների նման գործերը, որոնց տպագրութեան գծուարութեան հեռնկարն ինքնըսինքեան ջլատում է նրանց աշխատելու եռանդը:

Բ.

Ա՛րդ. ինչո՞վ կարող է Մ. Աթոռի տպարանը իրօք ազգային եկեղեցական մի կարևոր հաստատութիւն դառնալ: Նախընթաց պրակի մէջ արդէն բնորոշեցինք այդ հաստատութեան կոչումը ընդհանուր խօսքերով: Այդ կոչումը բղխում է Հայրապետական աթոռի և նորա միա-

բանութեան կրօնական — քաղաքակրթական բնաւորութիւնից։ Մ. Աթոռը իւր միաբանութեամբ կրօնական — եկեղեցական մի հաստատութիւն է, որ կոչուած է դաստիարակել հօտին Յիսուսի անձնաւորութեան օրինակով և աւետարանի քարոզած սկզբունքներով։ Նորա առաջին գործը պիտի լինի ուրեմն ժողովրդի ձեռքը Ս. Գիրք տալ, որ մեր հաւատոյ և բարոյական կեանքի աղբիւրն է։ Մինչև այժմ դեռ ևս Մ. Աթոռը իւր ժողովրդին Ս. Գիրք չի տուել իւր անմիջական հսկողութեամբ տպուած։ Հանգուցեալ Կաթողիկոսը յղացաւ ժողովրդին Ս. Գիրք տալու միտքը, բայց գործը կանգ առաւ հէնց սկզբում, մեծ հարուած հասցնելով Հայրապետական աթոռի բարոյական հեղինակութեան։ Ապագայ Կաթողիկոսի անմիջական ուշադրութեան խնդիրներից մէկը պիտի լինի այս գործը գլուխ հանել իւր աթոռի պատուին վայել կերպով, տալով միանգամայն 'և գիտնական 'և ժողովրդական հրատարակութիւն։ Այդ պարտաւորութիւնն ընկնում է Մ. Աթոռի վերայ ոչ միայն կոչման բերմունքով, այլ և այն բաժանորդներին բաւարարութիւն տալու, որոնք ժամանակին հատուցել են իրենց հնգական թուրքիները Մ. Աթոռի տպարանից դուրս եկած Աստուածաշունչ ստանալու համար։ Անյայտ չէ, որ Ս. գրքի գրաբար լեզուն ամենքին մատչելի չէ. անհրաժեշտ է հետզհետէ փորձեր անել, հետզհետէ Մ. Աթոռի ղեկավարութեամբ թարգմանել աշխարհիկ լեզուով նաև Ս. գրքի որոշ մասերը, որպէս զի աւելի մատչելի լինի հասարակ ժողովրդին։ Պատուասիրութեան և նախանձախնդրութեան զգացմունքից զուրկ մարդիկ միայն կարող են մատնանիչ անել բողոքականների հրատարակութիւնները և դորանով բաւականանալ։ Այն եկեղեցին, որ ջանքեր չի գործ դնում և կարողութիւն չունի իւր հօտին Ս. Գիրք մատակարարել, ինքնին իւր անզօրութիւնն ու անընդունակութիւնն է խոստովանում՝ դաստիարակչական առաքելութեան մեծ գործում։ Ժողովրդի ձեռքը Ս. գիրք պէտք է տալ. որպէս զի կեանքի այդ աղբիւրից նա իւր ծաւաւը յագեցնելու միջոց և հնարաւորութիւն

ունենայ։ Օտար եկեղեցիները ոչ միայն իրենց պարտաւորութիւնն են կատարում՝ դէպի հօտը, այլ և բիրիական ընկերութիւններ են կազմում այլանդաւանների մէջ հարիւր հազարներով Ս. Գրքը տարածելու։

Ս. Գրքի տարածման հետ պէտք է գործադրել քարոզչութեան այն բոլոր ազնիւ միջոցները, որ ներկայ քաղաքակրթութիւնն ու կեանքն ստեղծել է մտքեր և գաղափարներ տարածելու համար։ Այդ միջոցներն են թերթերն ու թռուցիկները, գրքայիններն ու գրքերը, գեղարուեստական պատկերները։ «Արարատն» այլ ևս իբրև ամսաթերթ չի կարող առօրեայ կարիքներին բաւականութիւն տալ, կեանքն ընթանում է արագ և իւր ստիպողական պահանջներն ունի։ Գիտական ուսումնասիրութիւնների և նպատակների համար կարելի է ուրիշ պարբերական ստեղծել, «Արարատ»-ը դարձնելով գոնէ շաբաթաթերթ։ Չպէտք է քաջուենք մենք ևս թռուցիկներով, բրոշիւրներով մեր մտքերը տարածել ժողովրդի մէջ։ Նոյն իսկ գեղարուեստական վէպեր քրիստոնէական բովանդակութեամբ, քարոզգրքեր, կրօնական խորհրդածութիւններ, ժողովրդին մատչելի մեկնութիւններ Ս. Գրքի լաւագոյն մասերին վերաբերեալ տնտեսական և բժշկական տարրական ծանոթութիւններ պէտք է ձգտենք սփռելու մեր եկրի բոլոր անկիւնները։ Հայ ընտանիքների մէջ տարածուած անճոռնի և անբովանդակ պատկերների փոխարէն, անհնարին չէ մատչելի գներով հրատարակել քրիստոնէական նշանաւոր նկարիչների գործերը ճաշակ կրթելու և աւետարանական գաղափարներն ու պատմութիւնները շոշափելի կերպով ժողովրդի առաջ դնելու համար։

Օտար և մեզնից աւելի քաղաքակիրթ ազգերի օրինակը կարող է մեզ ուղեցոյց լինել։ Այնտեղ հիմնուած են բազմաթիւ ընկերութիւններ և հաստատութիւններ եկեղեցու անմիջական հսկողութեան տակ կամ եկեղեցականների ղեկավարութեամբ, որոնք ժողովրդական ամբողջ գրականութիւն են ստեղծում, շարժական և հաստատ մատենադարաններ կազմում, շրջիկ գրավաճառների խում-

քեր պատրաստում և իրենց գրքերը շատ էժան գնով տարածում ժողովրդի խորին խաւերի մէջ։ Անհնարին չէ և մեզ համար այդպիսի փորձեր անել, ընթերցարաններ և փոքրիկ, ժողովրդական մատենադարաններ կազմել, կեդրոնական քաղաքներում եկեղեցական-գեղարուեստական գրավաճառանոցներ հիմնել։ Իսկ այս բոլորի ղեկավարն ու տնօրէնը Մ. Աթոռի տպարանը կարող է լինել իւր գեղեցիկ կազմակերպութեամբ և վարչութեամբ։

Այս ամենի հետ զուգընթացաբար պիտի ընթանայ բուն գիտնական և արուեստագիտական աշխատութիւնների հրատարակութիւնները։ Մենք արդէն ուրիշ առիթներով ևս մատնացոյց ենք արել, թէ ինչպիսի կարևոր նշանակութիւն ենք տալիս Մ. Աթոռի միաբանութեան գիտնական գործունէութեան։ Մեր ազգային եկեղեցու վերակենդանութեան գլխաւոր պայմաններից մէկն է այդ, որ ոչ մի սրտացաւ և իւր կոչման բարձրութեան վերայ կանգնած կաթողիկոս չի կարող անտես անել Առանց գիտութեան և նրանից բղխած խորը գիտակցութեան եկեղեցին անկարող է հետևողական կերպով ի կատար ածել իւր դաստիարակչական և քաղաքակրթական մեծ առաքելութիւնը։ Ս. Կաթողիկոսի վանահայրական և հայրապետական պաշտօնը պէտք է հարկադրէ նորան հովանաւոր հանգիստնալ գիտութեան և արուեստի ուսումնասիրութեան, խրախուսել միաբանութեան մէջ գիտնական և գրական աշխատութիւնը ոչ միայն հրատարակելով նրանց լուրջ և արժէք ունեցող գործերը, այլ և ամենայն տեսակ դիւրութիւններ ստեղծելով այդպիսի գործունէութեան համար։ Հայոց Հայրապետի ձգտումը պէտք է լինի իւր աթոռը վարչականի հետ նաև հայագիտութեան, քրիստոնէական քարոզչութեան և առաքելութեան կեդրոն դարձնել, և այդպիսով ներկայ ժամանակների համար ևս արդարացնել Ս. Էջմիածնի «լուսոյ խորան» կոչումը։

Գ.

Մ. Աթուռի տպարանի գործունէութիւնն այսպէս ընդարձակ ըմբռնելով, անշուշտ նիւթական ծախսեր կպահանջէ, Բայց մենք համոզուած ենք, որ պարտաճանաչ և տնձնուէր Հայրապետի համար դժուար չի լինիլ այդպիսի լուսաւոր նպատակների համար միջոցներ գտնել: Հայ ժողովուրդը չի զլացել իսկզբանէ անտի ապահովել իւր կաթուղիկոսների օգտակար գործունէութիւնը: Անպակաս չեն հայ ժողովրդի մէջ բարեգործներն ու լուսաւորութեան բարեկամները, միայն թէ մեր օգտակար և հետեւողական գործունէութեամբ կարողանայինք ուշադրութիւն գրաւել: Միանուագ նպաստներով և կտակներով կարելի է հետզհետէ Մ. Աթուռի տպարանը գիտութեան և քաղաքակրթութեան մի լուսաւոր փարոս, հրատարակչական մի գեղեցիկ հաստատութիւն դարձնել: Հէնց միայն «Արարատ»-ի պարտաւորական բաժանորդագրութիւնը հաստատութիւնների և քահանաների համար, չափաբերական մատեանների և ծիսապաշտական գրքերի հրատարակութիւնը եկամուտների ահագին աղբիւր է, եթէ հաշուապահութիւնը կանոնաւոր ընթանայ և փակուին այն անհաւատարմութիւնների դռները, որ գաւառներում, յատկապէս վերջին տարիներս, առասպելական բնաւորութիւն են ստացել: Հաղարների, տառնեակ հաղարների ապուռիկներ կան չգանձուած կամ գաղուած: Եւ այդ բոլորը հաշուապահութեան սխալ և հնացած սխտեմի պատճառով: Իբրեւ նմուշ կարող ենք յայտնել, որ տպարանի վարչութեան յայտնի չեն, թէ «Արարատ»-ի ո՞ր բաժանորդները վճարել են և ո՞րը ոչ, և այս տարիների ընթացքում: Որովհետեւ դրամական եկամուտները կեդրոնացած են եղել Սինոդում, իսկ տպարանը հնարաւորութիւն չի ունեցել ստուգելու իւր գործողութիւնների արդիւնքը:

Մեր տպարանի յառաջադիմութեան համար շատ վնասակար է եղել նաև նորա վարիչների անդադար փո-

փոխութիւնը Տպարանի տեսուչը կամ ժողովի անդամները հազիւ ծանօթացած իրենց գործին, փոխարինուել են նոր համբալներով։ Այն ինչ նորա կանոնաւոր զեկավարութեան համար անհրաժեշտ են նոյնպէս մասնագէտ, գործին հմուտ և փորձառու անձինք, ինչպէս և ամէն մի հաստատութեան համար։ Տպարանի ամբողջ գործունէութիւնն ու հաշուապահութիւնը պէտք է կեդրոնացնել վարիչների ձեռքում։ Սինոդին վերապահելով միայն ստուգութեան և քննութեան իրաւունքը։ Այդ վարիչները կաշխատեն գործեր գտնել, գրքեր տպել արտաքոյ վանական և պաշտօնական սովորական գործողութիւնների, որով և նիւթական աղբիւրները կընդարձակուին։ Տպարանի վարիչներին կից կկազմուի և մի յանձնաժողով, որի պարտաւորութիւնը կլինի քննութեան ենթարկել միաբանների և մասնաւոր անձանց այն աշխատութիւնները, որոնք առաջարկուում են տպել Մ. Աթոռի հաշուով։ Նոյն յանձնաժողովը կզեկավարէ նաև քարոզչութեան (պրոպագանդայի) ամբողջ գործը գաւառներում, «Արարատ»-ը և ապագայ հրատարակուելիք գիտնական թերթը և առհասարակ Մ. Աթոռի ձեռնարկելիք բոլոր հրատարակութիւնները։

Կրկնում ենք Մ. Աթոռի տպարանը քրիստոնէական քարոզչութեան, գիտութեան և քաղաքակրթութեան տարածման մի միջոց և հրատարակչական մի ազնիւ հաստատութիւն պիտի նկատուի մեր աչքում։

Գ. Վ. Յովսէփեան